

ԿԱՐԳ
«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Խաղաղություն» մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդեսը (Այսուհետ՝ Մրցույթ-ցուցահանդես) միտված է մշակութային կրթության ոլորտում, մասնավորապես՝ կերպարվեստի բնագավառում, շնորհալի երեխաների բացահայտմանը, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու ինքնադրսևորմանը, ինչպես նաև համապատասխան միջավայրի ստեղծմանը՝ հետագայում հայկական մանկապատանեկան կերպարվեստի ոլորտը ներկայացնելու միջազգային հեղինակավոր հարթակներում:
- 1.2. Մրցույթ-ցուցահանդեսը նվիրված է աշխարհում խաղաղությանը՝ պատերազմի և բռնության բացառմանը:
- 1.3. Մրցույթ-ցուցահանդեսի հիմնադիր՝ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամ (Այսուհետ՝ Կազմակերպիչ):
- 1.4. Մրցույթ-ցուցահանդեսի աջակից՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
- 1.5. Անցկացման ժամկետները՝ մարտ - հունիս, 2024թ.:

2. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Մրցույթն անցկացվում է տաղանդավոր երեխաներին բացահայտելու նպատակով՝ հնարավորություններ ընձեռելով նրանց զարգացմանը և ստեղծագործելուն:
- 2.2. Ստեղծագործական աշխատանքի միջոցով երեխաներին ընձեռել հնարավորություն զարգացնելու երևակայությունը, նկարչական ունակությունները, մտքերը հանձնել թղթին գույների միջոցով և տեսնել խաղաղության նկատմամբ նրանց պատկերացումը:

3. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 3.1. Մրցույթ-ցուցահանդեսին կարող են մասնակցել Երևանում և ՀՀ մարզերում գործող արվեստի և գեղարվեստի դպրոցների, ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների շնորհալի երեխաները (Այսուհետ՝ մասնակից):
- 3.2. Մեկ մասնակիցը մրցույթին կարող է ներկայացնել միայն մեկ ստեղծագործական աշխատանք: Մրցույթ-ցուցահանդեսին խմբակային աշխատանքներ չեն թույլատրվում:
- 3.3. Մրցույթ-ցուցահանդեսի մասնակցությունն անվճար է:
- 3.4. Մրցույթին մասնակցելու համար ուսումնական հաստատությունները ինքնուրույն ընտրում են լավագույն երեխաների ստեղծագործական աշխատանքները:

3.5. Այն հայտերը, որոնք չեն համապատասխանում պահանջներին, չեն թույլատրվի մասնակցել Մրցույթ-ցուցահանդեսին:

3.6. **Մրցույթ-ցուցահանդեսը կիրականցվի 3 փուլով.**

- **1 ՓՈՒԼ (Նախընտրական փուլ)**

Մասնակիցը ներկայացնում է **1 աշխատանք ազատ թեմայով:** Մրցույթի հանձնաժողովը՝ 2-րդ փուլին մասնակցելու նպատակով կընտրի 160 մասնակից, որոնք Կազմկոմիտեի կողմից կապահովվեն անհրաժեշտ բոլոր նյութերով:

- **2 ՓՈՒԼ**

Նախընտրական փուլը հաղթահարած 160 մասնակիցը ներկայացնում է «Խաղաղություն» թեմայով 1 աշխատանք: Աշխատանքները կատարվում են A2 ֆորմատի վատմանի չափով (կամ A1 ֆորմատի վատմանի կես չափով), ֆորմատի կողմնորոշմամբ (ուղղահայաց/հորիզոնական)՝ հեղինակի հայեցողությամբ:

- **3 ՓՈՒԼ (եզրափակիչ փուլ)**

Մրցույթ-ցուցահանդեսի հաղթողների որոշում.

3.7. Մրցույթ-ցուցահանդեսի հաղթողների համար սահմանված են հետևյալ մրցանակները.

- Առաջին մրցանակ՝ Դիպլոմ և դրամական մրցանակ
- Երկրորդ մրցանակ՝ Դիպլոմ և դրամական մրցանակ
- Երրորդ մրցանակ՝ Դիպլոմ և դրամական մրցանակ

Այն մասնակիցները, ովքեր չեն արժանացել մրցանակի, կպարգևատրվեն պատվոգրերով: Սահմանված են նաև հատուկ մրցանակներ:

3.8. Մրցակցային աշխատանքների գնահատման չափանիշները.

Աշխատանքների գնահատման հիմնական չափանիշներն են՝ համապատասխանությունը մրցույթի նշված թեմային, ստեղծագործության կատարման ինքնատիպությունը, աշխատանքը մասնակցի կողմից ինքնուրույն կատարումը, աշխատանքի կատարման որակը (կոմպոզիցիա, գունային լուծում, նկարչական հմտություններ, դիզայն):

4. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԸ

4.1. Նախընտրական փուլի աշխատանքները և հայտը (կցված է) ընդունվում են **01.04.-10.04.2024 թ.** հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 72, կոնտակտային հեռախոս՝ +37499424523; +37491979951, էլեկտրոնային փոստ՝ uacf.armenia.peace@gmail.com: Նախընտրական փուլի աշխատանքները և հայտը կարող է ուղարկվել մասնակցի կողմից նաև էլեկտրոնային տարբերակով՝ uacf.armenia.peace@gmail.com հասցեին:

- 4.2. Նախընտրական փուլը հաղթահարած մասնակիցների աշխատանքները և հայտը (կցված է) ընդունվում են **10.05.-20.05.2024 թ.** հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 72, կոնտակտային հեռախոս՝ +37499424523; +37491979951, էլեկտրոնային փոստ՝ uacf.armenia.peace@gmail.com:
- 4.3. Մրցույթ-ցուցահանդեսի եզրափակիչ փուլի մասնակիցների ընտրություն՝ **21.05-25.05.2024 թ.:**
- 4.4. Ամփոփիչ ցուցահանդեսի կազմակերպում, հաղթողների հայտարարում, պարզևատրման արարողության իրականացում – **01 հունիսի 2024 թ.:**
- 4.5. Հաղթողների հայտարարման և պարզևատրման արարողության վայրը – ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամորի մշակույթի տուն (հասցե՝ Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք):
- 4.6. Մրցույթի կազմակերպման և անցկացման վերաբերյալ բոլոր հարցերը, առաջարկությունները, պահանջները Կազմկոմիտեին ներկայացնել **մինչ 2024 թ. մայիսի 25-ը:**

5. ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՑՈՒՔԸ

- 5.1. Շնորհալի երեխաների բացահայտում, նրանց կարողությունների զարգացում, արտադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ այդ թվում արվեստի ու գեղարվեստի դպրոցների, ինչպես նաև ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների դերի բարձրացում, մարզերում մշակութային կյանքի աշխուժացում:

ՀԱՅՏ

**«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ
ՄՐՑՈՒՅԹ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ**

1. Ուսումնական հաստատության անվանումը_____
2. Ուսումնական հաստատության տնօրենի անունը, ազգանունը_____
3. Ուսումնական հաստատության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն_____
4. Մասնակցի անունը, ազգանունը, տարիքը, դասարանը_____
5. Ուսուցչի անունը, ազգանունը_____
6. Աշխատանքի անվանումը_____